Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի <<Բալաքի տարրական դպրոց>>
Պետական ուսումնական հաստատություն

ՀՀ Սյունիքի մարզ ,գ.Բալաք,հեռախոս՝ 093285764 . Էլ.հասցե՝balaq@schools.am

ՀՀ ԿԳՄՍ նախարարության

գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանին

Հարգելի տիկին Հակոբյան.

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15 ապրիլ 2013թ-ի N 396-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի» օրինակելի կարգի 12-րդ դրույթով՝ տեղեկացնում եմ, որ Սյունիքի մարզի «Բալաքի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված 2-րդ դասարանի դասվար և 4-րդ դասարանի դասվար , ուսուցիչների թափուր աշխատատեղեր:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Տնօրեն՝ Գ.Պողոսյան

+

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Բալաքի տարրական դպրոց» **ՊՈԱԿ-ի դասվար /2- դասարան/135000 դրամ և 4-րդ դասարան /148000դրամ աշխատավարձով:**Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են2025թ հոկտեմբերի 29-ից մինչև 2025թ նոյեմբերի 11 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ նոյեմբերի 17 -ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Բալաքի տարրական դպրոցում, հասցե՝ գ. Բալաք , փողոց1,շ.11: Տեղեկությունների համար զանգահարել 093285764 հեռախոսահամարով: